Ալաշկերտի ամբողջ դաշտն գրեթէ գիւղէս 12 ժամ դէպի հիւսիսային արեւելք կը տարածուի։

Գիւղս սակաւ իմն հակեալ է դէպի Շեռեանայ վրան․ ունի 120 տուն բնակիչ, որոց 30 տունը հայ կաթոլիկներ են, 8 տան չափ եւս քուրդ և քանի տներ եւս բողոքականութեան հետեւողներ։

Շեռեանայ երկու ափերն որ գիւղիս տեսարանն են, ընդարձակ մարգագետիններ են, ուր և միանգամայն ուռի ծառի բողբոջներ աճելով անտառակներ կազմած են, հակառակ այն աւերիչ մրցմանց, զոր գիւղացին ամ ըստ ամէ կը ջարդէ, կանհետացնէ, սակայն այս դիւրին աճող ծառն ի խոր արմատ ձգած լինելով՝ յաջորդ տարին դարձեալ իւր վիճակին մէջ է, բողբոջներն 2—3 մեթր բարձրացած են, մաղուլի փուշն խիտ ընդ խիտ պատած է, տեղ տեղ չիչխան փշերու միջէն ոչ ոք չէ կարող ճանապարհորդել և անասունք միանգամայն։

Այս ուռի բողբոջներն շատ անգամ կը գործածուին կողով, սլա, ըռաֆադայ շինելու, այժմ Թուրք գաղթականներն արմատահան անելով կը տանին Թօդալէ վաճառելու։

Գիւղիս շրջականերն տասնի չափ ջրաղացքներ կան, որոց շուրջն նաև առուներու եզրն ուռի և բարտի ծառեր բարձրացած են, բազմաթիւ պարտէզներ և բանջարանոցներ գիւղիս շուրջն կան՝ ցանկով պատած։

Մի մեծ ջրուղի հանուած է Շեռեանայ գլխից[1], որով գիւղիս արտօրայք կոռոգուին։ Այս ջրուղին շատ հին է, 2 $1/2$ ժամ գիւղէս բարձր Շեռեանայ ձախ ափէն ջուրը հանուած է դէպի արևելք։ Այժմ երկու ա-

---

1․ Շեռեան ամբողջ ընթացքին մէջ այս առուն է միայն, որ Ղաստուրայ, Մարդղի եւ Շաննաղարի քաշանաց առատ ջուր կընծայէ։